

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն N 0924

§ 2

ք.Ստեփանակերտ

«30» հունվարի 2019թ.

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ, ՇԱՐՔԱՅԻՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական պաշտպանության մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքը, Արցախի Հանրապետության կառավարության 2018թ. հոկտեմբերի
30-ի N 872-Ն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005թ. մայիսի 24-ի N
269 որոշումները.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. Հաստատել՝ Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական
ռեսուրսների նախարարության քաղաքացիական պաշտպանության կազմավորումների,
շարքային անձնակազմի պատրաստության 2019թ. ուսումնական ծրագիրը համաձայն՝
հավելված N 1:

2. Պարապմունքներն անցկացնել համաձայն հաստատված դասացուցակի, համաձայն՝
հավելված N 2:

3. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների
նախարարության Քաղաքացիական պաշտպանության պլանով հաստատված օղակներից
ձևավորել հետևյալ 4 խումբ.

խումբ 1 - Ազդարարման և կապը իրականացնող օղակ

խումբ 2 - Աշխատող անձնակազմի պաշտպանության և բժշկական ապահովման օղակ

խումբ 3 - Անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ, հետախուզության
և դիտարկում իրականացնող օղակ

խումբ 4 - Հակահրդեհային, ինժեներական և փրկարարական աշխատանքներ
իրականացնող օղակ:

4. Քաղաքացիական պաշտպանության կազմավորումների մեջ չմտնող աշխատողներին
ընդգրկել «Աշխատող անձնակազմի խումբ»-ի մեջ:

5. «Արցախանտառ» և ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ
առևտրային կազմակերպության տնօրեններին առաջնորդվել Արցախի Հանրապետության
բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարության քաղաքացիական

պաշտպանության կազմավորումների, շարքային անձնակազմի պատրաստության 2019թ. ուսումնական ծրագրով (հավելված N1 և N2):

6. Սույն հրամանի վերահսկողությունը վերապահել Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի առաջին տեղակալ՝ Ա.Գաբրիելյանին:

7. Քարտուղարության պետին՝ սույն հրամանը հասցնել խմբերի ղեկավարներին, «Արցախանտառ» և ««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեններին:



Ֆ.ԳԱԲՐԻԵԼՅԱՆ